




ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝ ք. Կապան



Տարածքը	4506 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	187792 հա
այդ թվում՝ վարելահողեր	46757 հա
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	105
Գյուղական բնակավայրեր	127
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	153.1 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	104.0 հազ. մարդ
գյուղական	49.1 հազ. մարդ

ՀՀ Սյունիքի մարզը զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 15%-ը: Մարզի բնակչությունը 2003թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 4.8%-ը: Այն ներառում է 7 քաղաք և 127 գյուղական բնակավայրեր, քաղաքային բնակչությունը կազմել է 67.9%: Օգտակար հանածոներով հանրապետության ամենահարուստ մարզն է: Մարզը սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), Ադրբեջանին և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը:

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավում և ընդգրկում է պատմական Մեծ Հայքի հզորագույն նահանգի՝ Սյունիքի (Սիսական) երբեմնի 12 գավառներից 6-ի տարածքները (Բաղք, Չորք, Կովսական, Ծղուկ, Հաբանդ և Արևիք): Այժմ այդ տարածքները համապատասխանում են Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրու տարածաշրջաններին:

Հայտնի են Բաղաբերդն ու Որոտնաբերդը, Հալիձորի ամրոցը, Տաթևի և Որոտնա վանքերը: Բնական հուշարձաններից են Գորիսի, Խնձորեսկի «բուրգերն» ու այրերը, Շաքիի ջրվեժը, Որոտանի ու Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը»:

Կապան քաղաքից հարավ՝ Ծավ գետի կիրճում է գտնվում աշխարհի ամենամեծ բնական սոսիների ռելիկտային պուրակը, որը զբաղեցնում է 60 հա տարածություն (ծառերի տարիքը հաշվվում է հարյուրամյակներով): Այդ եզակի պուրակի որոշ ծառերի տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 40-45 մ-ի:

Քաղաքից 4 կմ հեռու, Ողջի գետի աջ ափին, թավուտ անտառում է գտնվում Վահանավանքը (X-րդ դար)՝ պատմական Սյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, իսկ 25 կմ հեռավորության վրա՝ նեղ կիրճերով, թավուտ անտառներով գեղատեսիլ Շիկահողի պետական արգելոցը:

Ողջի գետի անտառածածկ կիրճում շատ են հանքային աղբյուրները: Կիրճի եզրին կանգուն է մնացել Բաղաբերդ հինավուրց ամրոցը (IV դար): Քաջարան քաղաքի շրջակայքը հարուստ է քաղցրահամ ու հանքային աղբյուրներով: Ծովի մակերևույթից 3250մ բարձրության վրա փռված Կապույտ լիճից սկիզբ է առնում Սեդրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան (3905մ) հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին: Միսիանից 6 կմ հեռավորության վրա է գտնվում Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):

Վաղատնիում է գտնվում Որոտնավանքը՝ X-XII դարերի ճարտարապետության մի հետաքրքիր ստեղծագործություն, իսկ Աղիտուում՝ XII դարի յուրատեսակ դամբարանային հուշարձանը: Միսիան քաղաքի շրջակայքում գտնվում է նեոլիտի ժամանակաշրջանի դամբարանաբլուր՝ Խոշում Դ-աշը, որը նախնադարյան մարդու կացարան է:

Սյունիքի իշխանանիստ կենտրոնը սկզբնական շրջանում եղել է Ծղուկ գավառի Շաղատ գյուղաքաղաքը, IX դարում՝ Վայոց ձորի Եղեգիս գյուղաքաղաքը, X դարի կեսերից սկսած՝ Կապան քաղաքը:

Պարսկական գավթիչների լծի դեմ XVIII դարում հայերի մղած ազատագրական պայքարում մեծ դեր է խաղացել Սյունիքի մեխիքական տոհմի ներկայացուցիչ Բսրայել Օրին, որը երկրի ազատագրության գաղափարը համահայկական շրջաններից գատ, ներկայացրել է նաև եվրոպական և ռուսական արքունիքներում:

1720-ական թվականներին Դավիթ Բեկի գլխավորությամբ, «Սյունյաց աշխարհ»-ն ազա-տագրվում է մահմեդական տիրապետության լծից (1727թ. տեղի ունեցած Հալիճորի ճակատամարտում Դավիթ Բեկի զորքը ջախջախում է թշնամու զորաբանակները):

XIX դարի վերջին Սյունյաց լեռներից արևելք ընկած գավառները ներառվում են Ելիզավետպոլի նահանգի մեջ, իսկ 1921թ. օգոստոսի 31-ին՝ Կապանի, Գորիսի, Միսիանի և Սեդրու գավառակներից կազմավորվում է Ջանգեզուրի գավառը՝ Գորիս կենտրոնով:

1930թ. նախկին գավառակների փոխարեն կազմավորվում են վարչական 4 շրջաններ և տարածաշրջանը տնտեսական և մշակութային մեծ վերելք է ապրում:

ՀՀ Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանա-կության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական տարածաշրջաններից մեկը, միաժամանակ մնում է քիչ բնակեցված և տնտեսապես թույլ զարգացած մարզերից մեկը:

Հանրապետությանը բնորոշ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և մյուս հիմնախնդիրները մարզում դրսևորվում են ավելի ընդգծված սրությամբ, որոնք կապված են որոշ առանձնահատուկ գործոնների հետ. մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությունը, տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությունը,

սահմանամերձ, լեռնային, փախստականներով բնակեցված, սակավամարդ և սակավահող բնակավայրերի մեծ թիվը (102 բնակավայր կամ բնակավայրերի 75.5%-ը), 1991-1994թթ. Ղարաբաղյան հակամարտության արդյունքում կրած տնտեսական վնասը և այլն:

Մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը 2003թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 9.8%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 9.6%-ը, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 0.8% և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 1.5%:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունը և էլեկտրաէներգիայի արտադրությունն է: Մարզը հարուստ է հանքային հանածոների ապարներով: Դրանցից կարևորագույններն են գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ, կապար) և ազնիվ (ոսկի, արծաթ) մետաղները, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պաշարներ):

Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկել Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

2003թ. մարզում գործել են 55 արդյունաբերական, 9 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 18 շինարարական, 9 տրանսպորտային, 3 կապի, 131 ծառայություններ մատուցող և 418 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 141-ը խանութներ են, 245-ը՝ կրպակներ, 27-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 3-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի և 2-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ:

Մարզում գործել են նաև 126 հանրակրթական, 16 երաժշտական ու արվեստի, 10 մարզական դպրոցներ, 60 նախադպրոցական հիմնարկ, 8 պետական միջին մասնագիտական ուսումնական, 3 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, պետական բարձրագույն ուսումնական հաստատության 2 մասնաճյուղ, 3 թանգարան, 148 գրադարան, 5 հյուրանոց, 29 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 9 հիվանդանոց, մշակութա-լուսավորչական նշանակության կենտրոններ և այլն:

Կապանի տարածաշրջան

Վարելահողեր	5040 հա
Քաղաքային համայնքներ	2
Գյուղական համայնքներ	38
Գյուղական բնակավայրեր	53
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	62.6 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	54.1 հազ. մարդ
գյուղական	8.5 հազ. մարդ

2003թ. ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Կապանի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 83.0%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 44.0% և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում՝ 32.6%:

Տարածաշրջանում 2003թ. գործել են 22 արդյունաբերական, 5 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 9 շինարարական, 2 տրանսպորտային, 3 կապի, 48 ծառայություններ մատուցող և 155 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 51-ը խանութներ են, 98-ը՝ կրպակներ, 7-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ են:

Տարածաշրջանում գործել են նաև 46 հանրակրթական, 6 երաժշտական և արվեստի և 4 մարզական դպրոցներ, 3 միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 25 նախադպրոցական հիմնարկ, 1 թանգարան, 62 գրադարան և 4 հյուրանոց, 11 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 5 հիվանդանոց, մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

Կապան քաղաքը (45.7 հազ. բնակիչ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ): Հանրապետության խոշոր արդյունաբերական քաղաքներից մեկն է: Տնտեսության առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Կապանի պղնձահանքերը հայտնի էին դեռևս միջին դարերում: 1846թ.-ից մինչև խորհրդային կարգերը պղնձահանքերը շահագործվել են մասնավոր ձեռնարկատերերի կողմից (ֆրանսիական արդյունաբերական և մետաղագործական ընկերություններ):

2003թ. քաղաքում գործել են 18 արդյունաբերական, 3 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 8 շինարարական, 2 տրանսպորտային, 3 կապի, 43 ծառայություններ մատուցող և 133 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 44-ը խանութներ են, 7-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Քաղաքում գործել են նաև 15 հանրակրթական, 5 երաժշտական և արվեստի, 3 մարզական դպրոցներ, 3 միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 12 նախադպրոցական հիմնարկ, 1 թանգարան, 17 գրադարան, 3 հյուրանոց, մարզային նշանակության մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

Քաջարան քաղաքը (8.4հազ. բնակիչ)՝ հանրապետության գունավոր մետալուրգիայի կենտրոնը, պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա կազմավորվել է 1958թ.:

2003թ. քաղաքում գործել են 2 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 6 բնակչությանը ծառայություններ մատուցող և 20 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից՝ 4-ը խանութներ: Քաղաքում գործել են նաև 5 հանրակրթական և 1 արվեստի, 1 մարզական դպրոցներ, 3 նախադպրոցական հիմնարկ, 6 գրադարան, 1 հյուրանոց, մարզային նշանակության մշակութալուսավորչական կենտրոններ և այլն:

Գորիսի տարածաշրջան

Վարելահողեր	16160 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	24
Գյուղական բնակավայրեր	27
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	44.4 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	23.2 հազ. մարդ
գյուղական	21.2 հազ. մարդ

2003թ. ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Գորիսի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 5.5%, մանրածախ ապրանքաշրջանարության մեջ՝ 27.3 % և մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 6.4 %:

2003թ. **տարածաշրջանում** գործել են 12 արդյունաբերական, 2 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 շինարարական, 2 տրանսպորտային, 32 ծառայություններ մատուցող և 82 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 45-ը խանութներ են, 30-ը՝ կրպակներ, 5-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Տարածաշրջանում գործել են նաև 31 հանրակրթական, 5 երաժշտական և արվեստի, 2 մարզական դպրոցներ, 3 միջին մասնագիտական ու 1 բարձրագույն պետական և 2 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 17 նախադպրոցական հիմնարկ, 1 թանգարան, 27 գրադարան, 1 հյուրանոց, 7 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց, մարզային նշանակության մշակութա-լուսավորչական կենտրոններ և այլն:

Գորիս քաղաքը (23.2 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1870թ.՝ որպես Ելիզավետպոլի նահանգի Չանգեզուր գավառի կենտրոն: Վարարակն գետը հին ու նոր քաղաքների «սահմանն» է: Գետի աջ ափին կանաչապատ քաղաքն է, ձախ ափին՝ քարե բուրգերի ու հրաբխային ապարների սյունների լաբիրինթոսը: 900 տարի առաջ Տաթևի վանքում հիմնվել է համալսարան, որտեղ ուսումնասիրվել է աստղագիտություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն և օտար լեզուներ:

Գորիս քաղաքի տնտեսության մեջ զգալի մաս են կազմել մշակող արդյունաբերությունը, մասնավորապես՝ սննդամթերքի և ըմպելիքների, մանածագործական և կարի արտադրանքի, մեքենաների և սարքավորանքի արտադրությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը և բաշխումը: Վերսկսվել է կոշկեղենի արտադրությունը (թողարկվում է տարբեր տեսակի մարզական և ակտիվ հանգստի կոշկեղեն):

2003թ. քաղաքում գործել են 7 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 շինարարական, 2 տրանսպորտային, 28 ծառայություններ մատուցող և 75 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 44-ը՝ խանութներ են, 5-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ սպառողական ապրանքների և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Քաղաքում գործել են նաև 7 հանրակրթական, 3 երաժշտական և արվեստի, 2 մարզական դպրոցներ, 3 միջին մասնագիտական ու 1 բարձրագույն պետական ուսումնական հաստատություններ և 2 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, 7 նախադպրոցական հիմնարկ, 1 թանգարան, 9 գրադարան, 1 հյուրանոց, մշակութա-լուսավորչական կենտրոններ և այլն:

Միսիանի տարածաշրջան

Վարելահողեր	24410 հա
Քաղաքային համայնքներ	2
Գյուղական համայնքներ	32
Գյուղական բնակավայրեր	34

Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	33.9 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	17.1 հազ. մարդ
գյուղական	16.8 հազ. մարդ

Տարածաշրջանը հարուստ է երկնագույն բազալտով, գրանիտով, պերլիտով և դիատոմիտներով: 2003թ. ՀՀ Սյունիքի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 0.7 %, մանրածախ ապրանքաշրջանարության մեջ՝ 23.8% և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում՝ 18.4 %:

2003թ. **տարածաշրջանում** գործել են 14 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 4 շինարարական, 3 տրանսպորտային, 23 ծառայություններ մատուցող և 105 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 39-ը խանութներ են, 55-ը՝ կրպակներ, 11-ը՝ հանրային սննդի օբյեկտներ:

Տարածաշրջանում գործել են նաև 38 հանրակրթական, 3 երաժշտական և արվեստի, 2 մարզական դպրոցներ, 12 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, 1 թանգարան, 39 գրադարան, 1 հիվանդանոց, 8 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

Միսիան քաղաքի (16.8հազ. բնակիչ) տնտեսությունը հիմնականում մասնագիտացել է հանքագործական արդյունաբերությունում, մասնավորապես՝ ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրության ու մշակող արդյունաբերության, որից՝ սննդամթերքի ու ըմպելիքների, մանածագործական և կարի արտադրանքի արտադրությունները:

2003թ. քաղաքում գործել են 11 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 շինարարական, 3 տրանսպորտային, 23 ծառայություններ մատուցող և 58 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 37-ը խանութներ են, 11-ը՝ հանրային սննդի օբյեկտներ:

Քաղաքում գործել են նաև 7 հանրակրթական, 3 երաժշտական և արվեստի, 2 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 2 միջին մասնագիտական ու 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, 1 թանգարան, 4 գրադարան, 9 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

Դաստակերտ քաղաքում (0.3 հազ.բնակիչ) 2003թ. գործել են 2 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ՝ խանութներ, 1 հանրակրթական դպրոց, 1 նախադպրոցական հիմնարկ և 1 գրադարան:

Մեղրու տարածաշրջան

Վարելահողեր	1147 հա
Քաղաքային համայնքներ	2
Գյուղական համայնքներ	11
Գյուղական բնակավայրեր	13
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	12.2 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	9.6 հազ. մարդ
գյուղական	2.6 հազ. մարդ

Մեղրին Հայաստանի ամենահարավային տարածաշրջանն է: ՀՀ ամենաբարձր լեռնանցքը Մեղրու լեռնանցքն է (2483մ):

2003թ. Սյունիքի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Մեղրու տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 10.8%, մանրածախ ապրանքաշրջանարության մեջ՝ 4.9%, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում՝ 42.6 %:

2003թ. տարածաշրջանում գործել են 7 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 2 շինարարական, 2 տրանսպորտային, 25 ծառայություններ մատուցող և 76 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 9-ը խանութներ են, 62-ը՝ կրպակներ, 4-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա:

Տարածաշրջանում գործել են նաև 11 հանրակրթական, 2 արվեստի, 2 մարզական դպրոցներ, 6 նախադպրոցական հիմնարկ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 20 գրադարան, 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց և այլն:

Մեղրի քաղաքը (4.8 հազ. բնակիչ) յուրահատուկ «կենդանի» թանգարան է, քաղաքի թաղամասերը «վեր են մագլցում» քարոտ լանջերով: Մեղրու ամրոցի մասին առաջին հիշատակությունը վերաբերվում է 1083թ.: Քաղաքում պահպանվել են XVII դարում կառուցված եկեղեցիներ:

2003թ. քաղաքի տնտեսության գերակշիռ ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (գործում են սննդամթերքի և ըմպելիքի արտադրության կազմակերպություններ): 2003թ. Մեղրի քաղաքում գործել են 4 արդյունաբերական, 2 շինարարական, 2 տրանսպորտային, 22 ծառայություններ մատուցող և 30 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 5-ը խանութներ են, 2-ը՝ հանրային սննդի օբյեկտներ:

Քաղաքում գործել են նաև 2 հանրակրթական և 1 արվեստի, 1 մարզական դպրոցներ, 1 նախադպրոցական հիմնարկ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 8 գրադարան և այլն:

Ագարակ քաղաքի (4.8 հազ. բնակիչ) տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում է գտնվում Հայաստան-Իրան սահմանային կետը, մաքսատունը և սահմանամերձ շուկան: 2003թ. քաղաքում գործել են 3 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 ծառայություններ մատուցող և 23 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 4-ը՝ խանութներ են, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ, 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 1 հանրակրթական, 1 արվեստի և 1 մարզական դպրոցներ, 1 նախադպրոցական հիմնարկ, 3 գրադարան և այլն:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Կապան	ք. Կապան
Ագարակ	ք. Ագարակ
Գորիս	ք. Գորիս
Դաստակերտ	ք. Դաստակերտ
Մեղրի	ք. Մեղրի
Սիսիան	ք. Սիսիան
Քաջարան	ք. Քաջարան

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ագարակ	Ագարակ
Այդարա (Այվանք)	Այդարա (Այվանք)
Ախլաթյան	Ախլաթյան
Աղիտու	Աղիտու
Աղվանի	Աղվանի
Անգեղակոթ	Անգեղակոթ
Անտառաշատ	Անտառաշատ
Աշոտավան	Աշոտավան
Առաջածոր	Առաջածոր
Արավուս	Արավուս
Արծվանիկ	Արծվանիկ
Արևիս	Արևիս
Բայաք	Բայաք
Բարձրավան	Բարձրավան
Բնունիս	Բնունիս
Բռնակոթ	Բռնակոթ
Բռուն	Բռուն
Գեղանուշ	Գեղանուշ
	Գոմարան
Գեղի	Գեղի
	Գեղավանք
	Կարդ
Գետաթաղ	Գետաթաղ
Գորայք	Գորայք
Գողեննիս	Գողեննիս
Դավիթ Բեկ	Դավիթ Բեկ
Դարբաս	Դարբաս
	Շամբ
Դովրուս (Տավրոս)	Դովրուս (Տավրոս)
Եղեգ	Եղեգ
Եղվարդ	Եղվարդ
Թանահատ	Թանահատ
Թասիկ	Թասիկ
Լեիվազ	Լեիվազ
Լեռնածոր	Լեռնածոր
	Կավճուտ
	Մուսայլամ (Չագեճոր)
Լիճք	Լիճք
Լժեն	Լժեն
Լոր	Լոր
Խալաջ (Աճանան)	Խալաջ (Աճանան)
Խդրանց	Խդրանց
Խնածախ	Խնածախ
Խնձորեսկ	Խնձորեսկ
Խոզնավար	Խոզնավար
Խոտ	Խոտ
Ծավ	Ծավ
	Շիշկերտ
Ծղուկ	Ծղուկ
Կաղնուտ	Կաղնուտ
Կարճևան	Կարճևան
Կոռնիճոր	Կոռնիճոր
Կուրիս	Կուրիս
Հայիճոր	Հայիճոր
Հարթաշեն	Հարթաշեն
Հարժիս	Հարժիս
Հացավան	Հացավան
Չորաստան	Չորաստան
Ղզլջուղ (Իշխանասար)	Ղզլջուղ (Իշխանասար)
Ճակատեն	Ճակատեն
Մուցք	Մուցք
Ներքին Խնձորեսկ	Ներքին Խնձորեսկ
Ներքին Խոտանան	Ներքին Խոտանան

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ներքին Հանդ	Ներքին Հանդ
Նյուվադի (Նռնաձոր)	Նյուվադի (Նռնաձոր)
Նորաշենիկ	Նորաշենիկ
Նորավան	Նորավան
Շաղատ	Շաղատ
Շաքի	Շաքի
Շենաթաղ	Շենաթաղ
Շիկահող	Շիկահող
Շինուհայր	Շինուհայր
Շվանիձոր	Շվանիձոր
Շրվենանց	Շրվենանց
Շուռնուխ	Շուռնուխ
	Աղբուլաղ
	Դուրդուլաղ (Վանանդ)
	Փայտամշակման գործ-ին կից գյուղ (Չորակ)
Որոտան (Գորիսի տարածաշրջան)	Որոտան
Որոտան (Միսիանի տարածաշրջան)	Որոտան
Չափնի	Չափնի
Սալվարդ	Սալվարդ
Սառնակունք	Սառնակունք
Սյունիք	Սյունիք
	Արզնակ (Սզնակ)
	Դիցմայրի
	Խորձոր
	Ներքին Գյոդաքյու (Բարգուշատ)
Սոֆյու	Սոֆյու
	Յդունի
Սպանդարյան	Սպանդարյան
Սվարանց	Սվարանց
Սրաշեն	Սրաշեն
Սևաքար	Սևաքար
Վահրավար	Վահրավար
Վաղատին	Վաղատին
Վաղատուր	Վաղատուր
Վանեք	Վանեք
Վարդանիձոր	Վարդանիձոր
	Այգեձոր
	Մարայգամի (Թխկուտ)
Վերին Գիրաթաղ	Վերին Գիրաթաղ
	Ներքին Գիրաթաղ
Վերին Գյոդաքյու (Վարդավանք)	Վերին Գյոդաքյու (Վարդավանք)
Վերին Խոտանան	Վերին Խոտանան
Վերիշեն	Վերիշեն
Տաթև	Տաթև
Տանձավեր	Տանձավեր
Տանձատափ	Տանձատափ
Տաշտուն	Տաշտուն
Տեղ	Տեղ
Տոլորս	Տոլորս
Տորունիք	Տորունիք
Ուժանիս	Ուժանիս
Ույծ	Ույծ
Փայտահան (Բակավանք)	Փայտահան (Բակավանք)
	Աջաբաջ
	Հաջաթին (Ոչեթի)
	Չայքենդ (Գետաշեն)
Փիրլու	Փիրլու
Քաշունի	Քաշունի
Քաջարան	Քաջարան
Քարահունջ	Քարահունջ
Քարաշեն	Քարաշեն
Քյուրուտ (Կահուրտ)	Քյուրուտ (Կահուրտ)
	Քիրս
Օխտար	Օխտար

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5108	4892
Ծնվածներ	115	59	56
Մահացածներ	77	39	38
Ամուսնություններ	38	X	X
Ամուսնալուծություններ	5	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	22.0	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	233	119	114
հանրակրթական	1496	764	732
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	129	66	63
միջին մասնագիտական	124	63	61
բարձրագույն մասնագիտական	93	48	45
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	30
Մարզիկներ, մարդ	92	47	45
Զբաղվածներ, մարդ	3318
նրանցից` գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից` գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	187	96	91
բժիշկներ	18
կրտսեր բուժանձնակազմ	47
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	911	465	446
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1785
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	615	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	45983
թատրոն	509
համերգ	-	-	-
թանգարան	353
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	374	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	389
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	29	X	X



Գարեգին Նժդեհի հուշարձանը



Եկեղեցի Կապան քաղաքում



Տաթևի վանքը